ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	ՀՕ-111-Ն	*Տեսակը*	Ինկորպորացիա
Տիպը	Օրենք	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2004.11.03/59(358) Հոդ.1214	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ Ազգային ժողով	*Ընդունման ամսաթիվը*	28.09.2004
Ստորագրող մարմինը	ՀՀ Նախագահ	*Ստորագրման ամսաթիվը*	21.10.2004
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	03.05.2005	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ՕՐԵՆՔԸ ԻՆԿԱՍԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2004 թվականի սեպտեմբերի 28-ին

ԻՆԿԱՍԱՑԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Գ Լ ՈՒ Խ 1.

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան և գործողության ոլորտը

Սույն օրենքը կարգավորում է Հայաստանի Հանրապետության տարածքում ինկասացիոն գործունեության և ինկասացիոն կազմակերպության հասկացությունները, ինկասացիոն գործունեության իրականացման կարգը, ինչպես նաև սահմանում է այդ գործունեության ընթացքում ինկասացիոն կազմակերպությունների կողմից օրենսդրության խախտումները և դրանց համար կիրառվող պատասխանատվության միջոցները:

(մասն ուժը կորցրել է 31.05.06 ՀՕ-101-Ն)

(1-ին հոդվածը փոփ. 31.05.06 ՀՕ-101-Ն)

Հոդված 2. Ինկասացիայի մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը

Հայաստանի Հանրապետության տարածքում իրականացվող ինկասացիոն գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության այլ օրենքներով, իսկ օրենքով նախատեսված դեպքերում՝ նաև իրավական այլ ակտերով:

Եթե Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված են այլ նորմեր, քան նախատեսված են սույն օրենքով, ապա կիրառվում են միջազգային պայմանագրերի նորմերը:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն են՝

ինկասացիոն կազմակերպություն՝ սույն օրենքով և «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության

օրենքով սահմանված կարգով ինկասացիոն ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա ունեցող առևտրային իրավաբանական անձ.

կանխիկ դրամ՝ շրջանառության մեջ գտնվող, ինչպես նաև շրջանառությունից հետ կանչված և հանված, սակայն փոխանակման ենթակա Հայաստանի Հանրապետության դրամը, ինչպես նաև կանխիկ արտարժույթ, թանկարժեք մետաղների ստանդարտացված ձուլակտորներ.

այլ արժեքներ՝ արժեթղթեր, վճարահաշվարկային փաստաթղթեր, ինչպես նաև այլ գույք, որը պատվիրատուն ցանկանում է փոխադրել.

բանկ՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկ, բանկի գլխամաս, բանկի տարածքային ստորաբաժանումներ.

վարկային կազմակերպություն՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող վարկային կազմակերպություն, վարկային կազմակերպության գլխամաս, վարկային կազմակերպության տարածքային ստորաբաժանումներ

հաճախորդ՝ բանկերի, վարկային կազմակերպությունների ծառայություններից օգտվող անձ.

պատվիրատու՝ անձ, որն ինկասացիոն կազմակերպության հետ կնքել է կանխիկ դրամի և (կամ) այլ արժեքների ինկասացիայի մասին պայմանագիր:

Հոդված 4. Ինկասացիոն գործունեությունը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում ինկասացիոն գործունեություն է համարվում որպես ձեռնարկատիրական գործունեություն իրականացվող կանխիկ դրամի ընդունումը, փոխադրումը (տեղափոխումը) և հանձնումը (ինկասացիա):

Ինկասացիոն կազմակերպությունները կարող են իրականացնել նաև կանխիկ դրամի ժամանակավոր պահպանություն:

2. Ինկասացիոն գործունեություն կարող են իրականացնել միայն «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով ինկասացիոն ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա ունեցող առևտրային իրավաբանական անձինք, որոնց կանոնադրական կապիտալը կազմում է առնվազն 20 միլիոն դրամ:

3. Ինկասացիոն կազմակերպությունները և նրանց մասնագիտացված աշխատակիցներն իրենց գործառնական պարտականությունները կատարելու համար իրավունք ունեն օգտագործելու քաղաքացիական և ծառայողական զենք, իսկ առանձին դեպքերում՝ ոստիկանության կողմից ժամանակավոր օգտագործման համար հատկացված մարտական զենքի առանձին տեսակներ: Ինկասացիոն գործունեություն իրականացնող կազմակերպությունների աշխատակիցների կողմից օգտագործվող քաղաքացիական և ծառայողական զենքի տեսակը, ձևը, մոդելը և քանակը սահմանում է կառավարությունը:

4. Ինկասացիոն կազմակերպությունը պետք է ունենա առնվազն մեկ միավոր զրահապատ ավտոտրանսպորտային միջոց: Այն պետք է ունենա գունային տարբերակում, սարքավորված լինի ռադիոկապով, ինչպես նաև հատուկ ձայնային և լուսնասպիտակ առկայծող փարոսիկների տեսքով լուսային ազդանշաններով:

5. Ինկասացիոն կազմակերպությունն իրավունք չունի իրականացնելու այլ գործունեություն, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով:

6. Ինկասացիոն կազմակերպություններին, նրանց կողմից օգտագործվող ավտոտրանսպորտային, տեխնիկական անվտանգության և այլ միջոցներին ներկայացվող պարտադիր պահանջները, դրանց իրականացման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(4-րդ հոդվածը խմբ., փոփ., լրաց. 31.05.06 ՀՕ-101-Ն)

Հոդված 5. Ինկասացիոն կազմակերպության լիցենզավորումը, ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցների որակավորման և մասնագիտական համապատասխանության և հատուկ պատրաստության ստուգումների կարգերը

1. Ինկասացիոն կազմակերպության լիցենզավորումն իրականացվում է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և կառավարության սահմանած կարգով:

2. Ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցների որակավորման և մասնագիտական համապատասխանության ստուգման կարգը սահմանվում է «Լիցենզավորման մասին», «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով և կառավարության սահմանած լիցենզավորման կարգով, որը համաձայնեցվում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ Կենտրոնական բանկ) հետ:

3. Ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցների որակավորման և մասնագիտական համապատասխանության վկայականը տրվում է անժամկետ:

4. Ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցներն անցնում են նաև հատուկ

պատրաստության ստուգումներ, որոնց անցկացման կարգը և պայմանները սահմանվում են «Զենքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:

(5-րդ հոդվածը խմբ. 28.09.16 ՀՕ-139-Ն)

Հոդված 6. Ինկասացիոն գործունեության նկատմամբ վերահսկողությունը

Ինկասացիոն ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիայի պահանջների կամ պայմանների պահպանման նկատմամբ վերահսկողությունն իրականացնում է կառավարության լիազորած մարմինը՝ «Զենքի մասին» և «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 2.

ԿԱՆԽԻԿ ԴՐԱՄԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԻՆԿԱՍԱՑԻԱ

Հոդված 7. Կանխիկ դրամի և այլ արժեքների փոխադրումը

1. Կենտրոնական բանկի՝ իր կողմից լիցենզավորվող կազմակերպությունների համար սահմանած առավելագույն սահմանաքանակը գերազանցող կանխիկ դրամի ինկասացիան պարտադիր իրականացնում են ինկասացիոն կազմակերպությունները:
2. Այլ արժեքների փոխադրումը կարող է իրականացվել ազատ՝ ինկասացիոն ծառայությունների մատուցման գործունեության լիցենզիա չունեցող անձանց կողմից:

Հոդված 8. Ինկասացիոն կազմակերպության կողմից կանխիկ դրամի և այլ արժեքների ընդունման և հանձնման ձևերը

1. Ինկասացիոն կազմակերպությունների և նրանց մասնագիտացված աշխատակիցների կողմից կանխիկ դրամի և այլ արժեքների ընդունման, փոխադրման (տեղափոխման), հանձնման և պահպանման կարգն ու պայմանները սահմանում է Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը:
2. *(մասն ուժը կորցրել է 31.05.06 ՀՕ-101-Ն)*

(8-րդ հոդվածը խմբ., փոփ. 31.05.06 ՀՕ-101-Ն)

Հոդված 9. Ինկասացիոն կազմակերպության կողմից փոխադրվող կանխիկ դրամի և այլ արժեքների, մասնագիտացված աշխատակիցների կյանքի և առողջության ապահովագրումը

Ինկասացիոն կազմակերպությունը պարտավոր է իր հաշվին ապահովագրել իր կողմից փոխադրվող կանխիկ դրամը, ինչպես նաև ինկասացիոն կազմակերպության մասնագիտացված աշխատակիցների կյանքը և առողջությունը: Կանխիկ դրամի տարբեր խմբաքանակների պարբերաբար ապահովագրությունն ապահովագրողի հետ որոշակի ժամանակահատվածի ընթացքում և միանման պայմաններով կարող է ապահովագրողի և ինկասացիոն կազմակերպության համաձայնությամբ իրականացվել մեկ ապահովագրության պայմանագրի՝ գլխավոր պոլիսի միջոցով:

Այլ արժեքների ապահովագրումը կատարվում է պատվիրատուի ցանկությամբ:

Գ Լ ՈՒ Խ 3.

ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎՈՂ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Հոդված 10. Ինկասացիոն կազմակերպության նկատմամբ կիրառվող պատասխանատվության միջոցները

Ինկասացիոն կազմակերպության նկատմամբ կարող են կիրառվել պատասխանատվության հետևյալ միջոցները՝
ա) նախազգուշացում և խախտումը վերացնելու հանձնարարական.

բ) լիցենզիայի գործողության կասեցում.

գ) լիցենզիայի գործողության դադարեցում:

Հոդված 11. Օրենսդրության խախտումները

Ինկասացիոն կազմակերպության նկատմամբ կարող են կիրառվել սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված պատասխանատվության միջոցները, եթե՝

ա) ինկասացիոն կազմակերպության կանոնադրական կապիտալի չափը չի համապատասխանում սույն օրենքով սահմանված կանոնադրական կապիտալի չափին.

բ) ինկասացիոն կազմակերպությունն իրականացրել է սույն օրենքով չնախատեսված գործունեություն.

գ) խախտվել են ինկասացիոն կազմակերպության անձնակազմի պատրաստվածության և տեխնիկական միջոցների պահանջվող վիճակն ապահովելու միջոցառումների կատարման վերաբերյալ պետական լիազորված մարմնի սահմանած պահանջները.

դ) ինկասացիոն կազմակերպությունը պետական լիազորված մարմնի սահմանած ժամկետում չի կատարել պետական լիազորված մարմնի՝ սույն օրենքով սահմանված խախտումները վերացնելու հանձնարարականը.

ե) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված են այլ դեպքեր:

Հոդված 12. Նախազգուշացումը և խախտումները վերացնելու հանձնարարականը

1. Նախազգուշացմամբ արձանագրվում է թույլ տված խախտումը և այդ մասին տեղեկացվում է ինկասացիոն կազմակերպությանը:

2. Նախազգուշացումը նախատեսում է նաև թույլ տված խախտումը պետական լիազորված մարմնի սահմանած ժամկետում վերացնելու կամ ապագայում նման խախտումը կանխելուն ուղղված միջոցառումներ ձեռնարկելու հանձնարարական, որի կատարումը պարտադիր է:

3. Նախազգուշացումը, որպես պատասխանատվության միջոց, կարող է կիրառվել, եթե տվյալ իրավախախտման համար սույն օրենքով լիցենզիայի գործողության կասեցում կամ լիցենզիայի գործողության դադարեցում նախատեսված չէ:

Սույն օրենքով նախատեսված իրավախախտման մեկ տեսակի համար կարող է կիրառվել պատասխանատվության մեկ միջոց:

Հոդված 13. Լիցենզիայի գործողության կասեցումը

Ինկասացիոն գործունեության լիցենզիան կարող է կասեցվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիցենզիայի գործողության կասեցման դեպքերում, ինչպես նաև սույն օրենքի 11-րդ հոդվածի «դ» կետով նախատեսված դեպքում:

Հոդված 14. Լիցենզիայի գործողության դադարեցումը

1. Ինկասացիոն կազմակերպության ինկասացիոն գործունեության լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված լիցենզիայի գործողության դադարեցման դեպքերում, ինչպես նաև սույն օրենքի 11-րդ հոդվածի «բ» կետով նախատեսված դեպքում:

Ինկասացիոն կազմակերպության ինկասացիոն գործունեության լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել նաև սույն օրենքի 11-րդ հոդվածի «ա» կետով թույլ տված խախտումը վերացնելու մասին պետական լիազորված մարմնի հանձնարարականը չկատարելու դեպքում:

2. Ինկասացիոն կազմակերպության լիցենզիայի գործողությունը դադարեցվում է նաև ինկասացիոն կազմակերպության կողմից լիցենզիա ստանալուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, գործունեություն չիրականացնելու դեպքում:

3. Ինկասացիոն կազմակերպության ինկասացիոն գործունեության լիցենզիայի գործողությունը կարող է դադարեցվել դատական կարգով:

Գ Լ Ո Ւ Խ 4.

ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 15. Օրենքի ուժի մեջ մտնելը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակվելուց վեց ամիս հետո:

2. Սահմանել, որ մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված և լիցենզավորվող ինկասացիոն կազմակերպությունները պարտավոր են վեցամսյա ժամկետում իրենց գործունեությունը համապատասխանեցնել սույն օրենքի պահանջներին:

3. Սահմանել, որ պետական լիազորված մարմինը և Կենտրոնական բանկը սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից եռամսյա ժամկետում ընդունում են սույն օրենքից բխող նորմատիվ իրավական ակտերը:

Հայաստանի Հանրապետության
Նախագահ

Ռ. Քոչարյան

2004 թ. հոկտեմբերի 21
Երևան
ՀՕ-111-Ն